Ս.ՇՏԻԿՅԱՆ

«ՎԱՆՔԸ»

Ժամանակը շատ էլ գթասիրտ չեղավ Տիգրան Չեոկյուրյանի հանդեպ։ Նրա գեղարվեստական ստեղծագործությունները, իսկ դրանք ամենևին էլ «Վանքը» վիպակով չեն սահմանափակվում, մեծ տարածում չգտան, և մի որոշ ժամանակ նույնիսկ մոռացության շղարշով պատվեցին։ Դրա պատճառն, իհարկե, այն չէր, որ Չեոկյուրյանը մեր գրականության մեջ շատ պատահող սովորական միջակություններից էր, որոնց անունները հայտնի են սոսկ սակավաթիվ մասնագետների. ով կարդա Հայպետհրատի հրատարակությամբ վերջերս հրատարակված նրա «Վանքը» վիպակը[1], այդպիսի բան չի ասի։ Բայց Չեոկյուրյանը ապրեց և ստեղծագործեց կոտորածների, սպանությունների, մահերի այն անագորույն ժամանակաշրջանում, որը մեզ մոտ կապվում է «Արյունոտ Սուլթան» Աբդուլ Համիդի անվան հետ, որի զոհը, ընդամենը 31 տարեկան հասակում եղավ նաև ինքը։ ՈՒստի զարմանալի չէ, որ այդ պայմաններում նա չկարողացավ ստանալ այն անունն ու հեղինակությունը, որին լիուլի արժանի էր։

Միանգամայն խրախուսելի է Պետհրատի նախաձեռնությունը Չեոկյուրյանի նշանավոր գործերից մեկի՝ «Վանքի» հրատարակության կապակցությամբ։ Ընդհանրապես անհրաժեշտ է նշել, որ վերջին շրջանում նկատվում է դրվատական մի միտում՝ ընթերցող և գիտական հասարակայնության լայն ուշադրությանը ներկայացնել հայ գրականության արևմտահայ հատվածի այն ներկայացուցիչներին, որոնք ինչ-ինչ առիթներով քիչ են հրատարակվել, կամ նույնիսկ, բոլորովին չեն հրատարակվել Սովետական Հայաստանում։ Այսպիսի գովելի քաղաքականության հետևանքով, ժամանակի համեմատաբար կարճ մի հատվածի ընթացքում, ընթերցողների սեփականությունն են դարձել Սիամանթոյի, Սևակի, Վարուժանի, Թեքեյանի, Օտյանի, Տյուսաբի, Կամսարականի, Բաշալյանի և այլոց գործերի քիչ թե շատ ամբողջական ժողովածուները, որոնց կարիքը հրամայական անհրաժեշտություն էր դարձել։ Նշված խմբում, ահա, իր համեստ, բայց կայուն տեղը գրավեց նաև մեր գրականության մի ուրիշ երախտավոր՝ Տիգրան Չեոկյուրյանը։

Շատ էլ հարուստ չէ Չեոկյուրյանի կենսագրությունը, և, բարեբախտաբար, այն մեզ հասել է համեմատաբար լրիվ։ Սկզբում «Փյունիկ» ամսագիրը (Բոստոն, 1919, № 5-6), ապա «Ուստանը» (Կ.Պոլիս, 1919, №1), ավելի ուշ՝ «Բազմավեպը» (Վենետիկ, 1933, № 5) հրատարակեցին

[1] Տիգրան Չեոկյուրյան, Վանքը, Երևան, 1962, կազմել և առաջաբանը գրել է Ռ.Սարգսյանը։

Չեոկյուրյանի կյանքին վերաբերող մի շարք արժեքավոր տեղեկություններ։ Ռ.Սարգսյանին, անշուշտ, հայտնի են եղել այդ տեղեկությունները, բայց, չգիտես ինչ նկատառումներից դրդված, նա գերադասել է տալ Չեոկյուրյանի հնարավորինս համառոտ կենսագրությունը, որը, բնականաբար, լրիվ պատկերացում չի տալիս հեղինակի կյանքի ուղու մասին։

Հանրահայտ է, որ Չեոկյուրյանի գլուխգործոցը «Վանքն» է, բայց հանրահայտ է նաև, որ նրա ամբողջ գեղարվեստական ստեղծագործությունը չի սահմանափակվում սոսկ դրանով։ Հազիվ ավարտած Պերպերյան վարժարանը՝ նա բանաստեղծություններ է հրատարակում պոլսահայ զանազան պարբերականներում, ի դեպ, որպես բանաստեղծ էլ նա սկսում է իր գրական ուղին։ Այդ գործերից՝ «Ամպերը» («Ֆրու-ֆրու», 1908, № 1), «Մահեն կյանք» («Հայրենի քնար», 1908, № 8), «Միջին դար» («Սասուն», 1959, № 3), «Երգիչը» (Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1911, էջ 111-117) և այլն, մինչև օրս էլ զուրկ չեն որոշակի հետաքրքրությունից։ Այս ամենի մասին, ինչպես նաև հեղինակի կատարած մի քանի թարգմանությունների մասին՝ ռուսերենից և ֆրանսերենից, անհրաժեշտ էր գեթ մի քանի խոսք ասել առաջաբանում, որը, սակայն, չի արված։

Բայց եթե Չեոկյուրյանի բանաստեղծությունները սույն հատորում զետեղելու կամ չզետեղելու հարցը սկզբունքային մեծ նշանակություն չունի, նույնը չի կարելի ասել նրա արձակ գրական ժառանգության մասին։ Բանաստեղծություններ գրելուց փոքր-ինչ ավելի ուշ, Չեոկյուրյանը սկսեց մամուլում հանդես գալ իր արձակ մանրապատումներով, որոնք հենց սկզբից իսկ ուշադրության առարկա դարձան, և որոնք հետագայում նա հրատարակեց մի փոքրիկ հատորով՝ «Հայրենի ձայներ» խորագրով։ Զետեղելով նրանցից մի քանիսը 1909 թվականի իր տարեցույցում «Արձակ երգեր» խորագրով, Թեոդիկը դրվատանքով արտահայտվեց նրանց մասին, իսկ «Ճամբու վրա» պատմվածքը («Ոստան», 1911, № 1) և մանավանդ «Հերոսը» վիպակը (անդ, 1911, № 4), արդեն վճռականորեն վկայում են Չեոկյուրյանի գրական անժխտելի կարողությունների մասին։ Մեծապես շահած կլինեին ընթերցողները, եթե «Վանքի» հետ մեկտեղ զետեղվեին մի քանի մանրապատումներ «Հայրենի ձայներ» ժողովածուից, և մանավանդ, «Հերոսը» վիպակը, որով արդեն ընդգրկված կլիներ հեղինակի գրական ժառանգության գրեթե մեծ մասը։ Մինչդեռ այդ ամենը, առանց դրա համար որևէ պատճառաբանություն անգամ բերելու, Ռ. Սարգսյանը դուրս է թողել, որով, իհարկե, Չեոկյուրյանի՝ որպես գրողի ստեղծագործական դիմանկարը չի ամբողջացել։

Եվ վերջապես, չի կարելի հրատարակել արևմտահայ մեր հեղինակների գործերն ընդհանրապես և դրանց թվում նաև Չեոկյուրյանի «Վանքը» վիպակը առանց, թեկուզ խիստ համառոտ, ծանոթագրությունների։ Ամբողջ շարադրանքի ընթացքում հեղինակը բազմիցս հիշատակում է դեպքեր, փաստեր, եղելություններ, որոնք այսօր անհասկանալի են մնում մեր ընթերցողների գերակշիռ մասի համար, իսկ սա էլ, իր հերթին, դժվարացնում է վիպակի՝ մինչև վերջ յուրացման գործը։ Կարիք կա՞ ասելու, որ այս հանգամանքը ոչ միայն չի կարելի խրախուսել, այլև անհրաժեշտ է ի նկատի ունենալ՝ առաջիկայում նման դեպքերից խուսափելու համար։

Երևան, 1962, № 286, դեկտեմբերի 5

Լրաբեր, 1963, № 96, մարտի 7

(արտատպվել է «Երևան» պարբերականից)